

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 17-ի N 903 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

**ՍԱՆԻՏԱՐԱՎՈՒՄԻ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Ստուգաթերթ N 1.20

**Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի կազմակերպման և
իրականացման նկատմամբ վերահսկողության
(ՏԳՏԴ ծածկագրեր՝ Q 86.10, Q 86.22)**

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ 20__ թվական _____ ավարտը՝ _____ 20__ թվական

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

Հ Վ Հ Հ

--	--	--	--	--	--	--	--	--	--

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները

(հեռախոսահամարը)

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը

(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20__ թվական

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

N	Հարց	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
2.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող առանձնացված ստորաբաժանումները	
3.	Լիցենզիայի տեսակները	
4.	Տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների թիվը	
5.	Տարեկան սպասարկվող պացիենտների միջին թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

«Հ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի կազմակերպման և իրականացման պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների

Հ/Հ	Նորմատիվ իրավական ակտի պահանջը	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Չ/պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության (այսուհետ՝ ԲԿ) սպասարկման ենթակա ազգաբնակչությունը հաշվառվել է տարին երկու անգամ՝ ԲԿ-ի տնօրենի հրամանի հիման վրա: Հաշվառվել են՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 12						
1.1	բնակության տվյալ հասցեում մշտական բնակվող և գրանցված անձինք,					1.0	Փաստաթղթային	
1.2	բնակության տվյալ հասցեում գրանցված, սակայն այլ հասցեում բնակվող անձինք (կատարվում է նշում հասցեի մասին),					1.0	Փաստաթղթային	
1.3	տվյալ հասցեում բնակվող, սակայն չգրանցված կամ այլ հասցեում գրանցված անձինք (կատարվում է նշում գրանցման հասցեի կամ դրա բացակայության մասին),					1.0	Փաստաթղթային	
1.4	ԲԿ-ում նոր հաշվառված յուրաքանչյուր անձ,					1.0	Փաստաթղթային	
1.5	բժշկի ազատ ընտրության դեպքում ԲԿ-ում հաշվառված անձինք:					1.0	Փաստաթղթային	
2.	Յուրաքանչյուր նորածնի համար լրացվել է «Կանխարգելիչ պատվաստումների քարտ»: Հաշվառված ազգաբնակչության տվյալները գրանցվել են «0-18 տարեկան երեխաների հաշվառման «Մայր մատյանում», «Մեծահասակների հաշվառման	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 13				1.0	Փաստաթղթային	

	մատյանում» և/կամ էլեկտրոնային գործող համակարգում («Էլեկտրոնային առողջապահություն»): Նշում 1 (Ձև 1, Ձև 2, Ձև 13)							
3.	Բնակության վայրից ժամանակավոր բացակայության դեպքում երեխան հաշվառման մեջ մնում է 30 օր:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 15				0.5	Փաստաթղթային	
4.	Պատվաստումներն իրականացվում են իմունականխարգելման կաբինետում:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 18				1.0	Փաստաթղթային Դիտողական	
5.	ԲԿ-ի տնօրենի կողմից նշանակված են իմունականխարգելման պատասխանատուներ՝ պատվաստումային գործընթացի կազմակերպման և իրականացման, կառավարելի վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ԿՎՀ) վարման, բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների (այսուհետ՝ ԲԻԿՊ) ստացման, հաշվառման, պահպանման, սառցային շղթայի պահպանման, պատվաստումների ընթացքում առաջացող բժշկական թափոնների հավաքման, պահման և ոչնչացման համար:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 18				1.0	Փաստաթղթային	
6.	Սառնարանային սարքավորումներ չունեցող ԲՄԿ-ներում պատվաստումներն իրականացվում են ԲԿ-ի արտագնա/շարժական պատվաստումային խմբերի միջոցով:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 21				0.5	Փաստաթղթային Հարցում Դիտողական	

7.	Իմունականխարգելման կաբինետում ապահովվում է ամենօրյա մաքրում, օդափոխություն: Պատվաստման սենքի տարածքը օրը 2 անգամ ենթարկվում է խոնավ մաքրման՝ օգտագործելով լվացող միջոց և այդ նպատակի համար առանձնացված և մակնշված մաքրող պարագաներ, իսկ օրվա վերջում օգտագործվում է ախտահանիչ նյութ: Շաբաթը մեկ անգամ իրականացվում է պատվաստման կաբինետի հիմնական մաքրում:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 25				1.0	Դիտողական Հարցում	
8.	Իմունականխարգելման կաբինետն ապահովված է բնական օդափոխությամբ:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 30				1.0	Դիտողական	
9.	Իմունականխարգելման կաբինետն ապահովված է կենտրոնական ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 31				1.0	Դիտողական	
10.	Իմունականխարգելման կաբինետում առկա են՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 32						
10.1	սեղան բժշկի և բուժքրոջ համար, աթոռ, թախտ, բարուրման սեղան, 1 հատ ճնշում չափելու սարք, 2 հատ ջերմաչափ, ջերմաչափերի պահպանման տարաներ՝ «մաքուր» և «կեղտոտ» մակնշումներով,					0.5	Դիտողական	

10.2	պատվաստանյութերի պահպանման սառնարան՝ համարակալված, մակնշված դարակներով, 2 ջերմաչափով, ջերմաստիճանի էլեկտրոնային հսկողության սարքով, թերմոկոնտեյներ և սառնարան-պայուսակներ, սառցային տարրեր, որոնց քանակը համապատասխանում է թերմոկոնտեյների և սառնարան-պայուսակների օգտագործման հրահանգում նշված քանակին,					1.0	Դիտողական	
10.3	բժշկական պահարան, առաջին օգնության միջոցների հավաքածու, անհետաձգելի օգնության միջոցառումների հրահանգ՝ փակցված տեսանելի և օգտագործման համար հարմար տեղում, Նշում 2					1.0	Դիտողական	
10.4	ախտահանման ենթակա բժշկական սեղաններ, փաստաթղթերի համար պահարան,					0.5	Դիտողական	
10.5	ձեռքերի լվացման համար լվացարան, ախտահանիչ նյութ, միանվագ օգտագործման անձեռոցիկներ, սրբիչներ,					1.0	Դիտողական	
10.6	քարտադարան՝ կանխարգելիչ պատվաստումների քարտերի համար դարակաշարերով, և/կամ էլեկտրոնային քարտադարան,					0.5	Դիտողական	
10.7	արտակարգ իրավիճակների դեպքում պատվաստանյութերի և օժանդակ պարագաների շտապ տեղափոխման գրավոր պլան:					0.5	Փաստաթղթային Դիտողական	
11.	Ծննդօգնություն իրականացնող ԲԿ-ում պատվաստումներն իրականացվում են՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 33						

11.1	իմունականխարգելման կաբինետում կամ հիվանդասենյակում,					0.5	Դիտողական	
11.2	պարտադիր ծնողի կամ խնամակալի ներկայությամբ, որոնք նախապես իրազեկվում են ԲՅԾ և ՎՀԲ պատվաստումների միջոցով կանխարգելվող հիվանդությունների, դրանց բարդությունների, ինչպես նաև պատվաստումից հետո դիտվող երևույթների մասին:					0.5	Դիտողական Հարցում	
12.	Հիվանդասենյակում պատվաստումային գործընթացն իրականացվում է շարժական սեղանի միջոցով, որը հազեցված է՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 34						
12.1	պատվաստանյութերով բեռնավորված սառնարան-պայուսակով,					1.0	Դիտողական	
12.2	միանվագ օգտագործման ներարկիչներով՝ պատվաստանյութի վերականգնման համար, և միանվագ օգտագործման ինքնարգելափակվող ներարկիչներով՝ պատվաստումների իրականացման համար,					1.0	Դիտողական	
12.3	բամբակով, ներարկման տեղի մշակման համար թորած ջրով և/կամ 70° սպիրտով,					1.0	Դիտողական	
12.4	առաջին օգնության դեղորայքով,					1.0	Դիտողական	
12.5	անվտանգ այրման տուփով:					0.5	Դիտողական	
13.	Նորածինը պատվաստումից առաջ գննվում է բժշկի կողմից, կատարվում է ջերմաչափում, գնահատվում է ընդհանուր առողջական վիճակը:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 35				2.0	Փաստաթղթային	

14.	Կատարված պատվաստումները գրանցվում են «Նորածինների պատվաստումների գրանցամատյանում» ըստ հերթական համարների (յուրաքանչյուր ամսվա համար նոր հերթական համար չի սկսվում, այլ շարունակվում է) և/կամ էլեկտրոնային գործող համակարգով («էլեկտրոնային առողջապահություն»): Նշվում է պատվաստվողի ծննդյան ամսաթիվը, տարեթիվը և ժամը՝ պատվաստման պահին: Նորածնի տարիքը նշվում է համապատասխան սյունակում՝ օրերով և ժամերով: Նշում 3 (Ձև 5)	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 36				1.0	Փաստաթղթային	
15.	Պատվաստումը գրանցվում է անմիջապես կատարելուց հետո՝ ճշգրիտ պահպանելով պատվաստումների հերթականությունը:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 37				1.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	
16.	Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարումների վարումն ու խորհրդատվությունն իրականացնում է նեոնատոլոգը:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 85, 91				1.0	Փաստաթղթային	
17.	Առկա է կանխարգելիչ պատվաստումների տարեկան/ամսական պլան:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 39				1.0	Փաստաթղթային	
18.	«Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման» և «Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց պլանավորման» մատյանները վարվում են տեղամասային բուժքրոջ կողմից՝ տեղամասային բժշկի հսկողությամբ: Նշում 4 (Ձև 3, Ձև 4)	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 42				1.0	Փաստաթղթային	

19.	Նախորդ ամսվա պլանից դուրս մնացած երեխաների տվյալները տեղափոխվում են հաջորդ ամսվա պլանի մեջ և պլանավորվում են ամսվա առաջին օրերին: Մեծահասակների պատվաստումները պլանավորվում են տարեկան կտրվածքով:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 43				1.0	Փաստաթղթային Հարցում	
20.	Պահպանվում են Պատվաստումների ազգային օրացույցով սահմանված ժամկետները: Օրացույցային ժամկետներից շեղումների դեպքում միանման պատվաստանյութի հերթական չափաբաժինների միջև պահպանվում է նվազագույնը 4 շաբաթ ժամանակահատված:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 44				1.0	Փաստաթղթային Հարցում	
21.	Պահպանվում են պատվաստումների միջև թույլատրելի և անհրաժեշտ ժամանակահատվածները:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 45				1.0	Փաստաթղթային Հարցում	
22.	Առողջական վիճակի հետ կապված պատվաստումների միջև ընդմիջումների երկարացման դեպքում պատվաստումը կատարվում է երեխայի առողջացումից անմիջապես հետո:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 48				1.0	Փաստաթղթային Հարցում	
23.	Պատվաստումների ժամանակավոր հակացուցումները հիմնավորված են:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 78				2.0	Փաստաթղթային	
24.	ԲԿ-ում նորածինների հաշվառման ժամանակ ծնողներին տրվում է «Կանխարգելիչ պատվաստումների վկայական», որում յուրաքանչյուր պատվաստումից հետո նշվում է հաջորդ պատվաստման ներկայանալու ամսաթիվը: Նշում 5 (Ձև 14)	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 51				1.0	Փաստաթղթային Հարցում	

25.	Կանխարգելիչ պատվաստումներ չեն իրականացվում վիրակապարանում կամ միջամտությունների սենյակում, բացառությամբ փայտացման և կատաղության դեմ արտակարգ կանխարգելման դեպքերի:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 52				1.0	Փաստաթղթային Դիտողական	
26.	Պատվաստումից առաջ գնահատվում է պատվաստվող անձի ընդհանուր առողջական վիճակը.	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 53						
26.1	պլանային պատվաստումների դեպքում բժիշկը հավաքում է մանրակրկիտ վերհուշ, կատարում է սուբյեկտիվ և օբյեկտիվ զննում, ջերմաչափում և տվյալները գրանցում է ամբուլատոր քարտում,					2.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	
26.2	արտակարգ իրավիճակներում կամ համաճարակաբանական ցուցումով պատվաստումից առաջ բժիշկը հավաքում է տեղեկատվություն միայն պատվաստվող անձի գանգատների մասին և ըստ գանգատների իրականացնում է համապատասխան զննում (հետազոտություն):					2.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	
27.	Կանխարգելիչ պատվաստումներից առաջ պատվաստում իրականացնող բուժաշխատողը տեսողական ստուգում է շիկի կամ սրվակի ամբողջականությունը, պիտակը, ներարկվող պատրաստուկի արտաքին տեսքը, գույնը, պիտանելիության ժամկետը, պատվաստանյութի շիկի ցուցիչի (այսուհետ՝ ՊՇՑ) առկայության դեպքում՝ ցուցիչի վիճակը:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 55					Դիտողական Հարցում	

28.	ԲԻԿՊ-ների ներարկման ճանապարհով ներմուծումը կատարվում է միանվագ օգտագործման ինքնարգելափակվող/ինքնատնչազգվող ներարկիչով, անվտանգության կանոնների պահպանմամբ: Միաժամանակյա մի քանի ներարկումների դեպքում յուրաքանչյուր պատվաստանյութ ներարկվում է առանձին ներարկիչով, մարմնի տարբեր հատվածներում՝ համաձայն պատվաստանյութերի կիրառման հրահանգի, պահպանելով ներարկման տեղերի միջև առնվազն 2,5 սմ հեռավորություն:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 57					Դիտողական Հարցում	
29.	Պատվաստանյութի ներարկման տեղը մշակվում է 70° սպիրտով կամ թորած ջրով (սպիրտի դեպքում սպասում են մինչև չորանալը): ԲՑԺ պատվաստման դեպքում ներարկման տեղի մշակման համար օգտագործվում է միայն թորած ջուր:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 58				1.0	Դիտողական Հարցում	
30.	Պատվաստանյութերը ներարկվում են կիրառման հրահանգին համապատասխան՝ նշված դեղաչափով և ներարկման մեթոդաբանությամբ (ներմաշկային, միջմկանային, ենթամաշկային, վերմաշկային), պատվաստվողի պառկած կամ նստած վիճակում:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 59				1.0	Դիտողական Հարցում	
31.	Արտագնա պատվաստումների ընթացքում մեկ պատվաստման կետից մյուսը պատվաստանյութի բացված և/կամ վերականգնված սրվակները չեն տեղափոխվում (խոտանվում են):	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 61				1.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	
32.	Պատվաստումից հետո պատվաստվողը մնում է ԲԿ-ում առնվազն 30 րոպե: Բժիշկը տրամադրում է տեղեկատվություն և խորհրդատվություն հետպատվաստումային շրջանում հնարավոր ռեակցիաների մասին:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 62				1.0	Դիտողական Հարցում	
33.	Կատարված կանխարգելիչ պատվաստումները գրանցվում են՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն						

		հրամանի հավելվածի կետ 65, 69 և 70-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ ենթակետեր						
33.1	«Նորածինների պատվաստումների գրանցամատյանում»,					0.5	Փաստաթղթային	
33.2	«Պատվաստումների գրանցամատյանում», Նշում 6 (Ձև 6)					0.5	Փաստաթղթային	
33.3	«Կանխարգելիչ պատվաստումների քարտում», Նշում 1 (Ձև 13)					0.5	Փաստաթղթային	
33.4	«Կանխարգելիչ պատվաստումների վկայականում», Նշում 5 (Ձև 14)					0.5	Փաստաթղթային	
33.5	«Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում», Նշում 4 (Ձև 3)					0.5	Փաստաթղթային	
33.6	«Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց պլանավորման մատյանում», Նշում 4 (Ձև 4)					0.5	Փաստաթղթային	
33.7	«Մեծահասակ անձանց պատվաստումների գրանցամատյանում», Նշում 6 (Ձև 7)					0.5	Փաստաթղթային	
33.8	«Պատվաստումներում ընդգրկվածության կորստի մոնիթորինգի թերթիկում», Նշում 6 (Ձև 8)					0.5	Փաստաթղթային	
33.9	«Պատվաստումներում տարեկան ընդգրկվածության մոնիթորինգի գծապատկերում», Նշում 6 (Ձև 9)					0.5	Փաստաթղթային	
33.10	«Պատվաստումների հաշվառման թերթիկում», Նշում 6 (Ձև 10)					0.5	Փաստաթղթային	
33.11	«Մեծահասակների պատվաստումների հաշվառման թերթիկում», Նշում 6 (Ձև 11)					0.5	Փաստաթղթային	
33.12	«Պատվաստանյութերի և օժանդակ պարագաների օրական ծախսի թերթիկում»,					0.5	Փաստաթղթային	

	Նշում 6 (Ձև 20)							
33.13	«Նորածնի զարգացման քարտում»,					0.5	Փաստաթղթային	
33.14	«Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում»,					0.5	Փաստաթղթային	
33.15	«Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում», և/կամ էլեկտրոնային գործող համակարգում («էլեկտրոնային առողջապահություն»):					0.5	Փաստաթղթային	
34.	Կատարված կանխարգելիչ պատվաստումների, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, պատվաստումների հակացուցումների, պատվաստումներում ընդգրկվածության և ընդգրկվածության կորստի մակարդակների վերաբերյալ հաշվետվությունները կազմվում և ներկայացվում են վարչական վիճակագրական հաշվետվություններով և/կամ էլեկտրոնային գործող համակարգով («էլեկտրոնային առողջապահություն»):	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 66				1.0	Փաստաթղթային	
35.	Պատահական ծակոցները գրանցվում են պատվաստումների գրանցամատյանում:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 67				1.0	Փաստաթղթային	
36.	Պատվաստում իրականացնող բուժաշխատողի մոտ պատահական ծակոցի դեպքում արյունը հետազոտվում է արտաընդերային ուղիով փոխանցվող վարակների նկատմամբ: Առաջին հետազոտությունը կատարվում է պատահարից անմիջապես հետո: Բացասական պատասխանի դեպքում կրկնակի հետազոտությունն իրականացվում է 1,3, 6 և 12 ամիս հետո:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 75				2.0	Փաստաթղթային	

37.	Պատվաստում իրականացնող բուժաշխատողը պատվաստված է վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 74				2.0	Փաստաթղթային	
38.	Իմունականխարգելման գործընթացում ընդգրկված մասնագետներն ապահովում են՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 70, 73						
38.1	կանխարգելիչ պատվաստումների քարտերի քարտադարանի ստեղծում և վարում՝ ըստ տեղամասերի և ամիսների,					1.0	Փաստաթղթային	
38.2	իմունականխարգելման գործընթացում կիրառվող գրանցամատյանների, հաշվառման և հաշվետվությունների ձևաթղթերի վարում,					1.0	Փաստաթղթային	
38.3	կանխարգելիչ պատվաստումների տարեկան և ամսական պլանավորում,					1.0	Փաստաթղթային	
38.4	պատվաստում իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների (պատվաստանյութ, ներարկիչ, այրման տուփ և այլն) պահանջարկի որոշում և հայտի ներկայացում,					1.0	Փաստաթղթային	
38.5	կանխարգելիչ պատվաստումների իրականացում, պատվաստումներում ընդգրկվածության (ամբողջական, ժամանակին, ըստ առանձին պատվաստումների), կորստի մակարդակի գնահատում,					1.0	Փաստաթղթային	
38.6	յուրաքանչյուր ամիս պատվաստումներում ընդգրկվածության (ամբողջական, ժամանակին, ըստ առանձին պատվաստումների), կորստի մակարդակի, պատվաստումների կատարողականի վերլուծություն ըստ տեղամասերի և ներկայացում ԲԿ-ի տնօրենին,					1.0	Փաստաթղթային	

38.7	հակացուցումների հիմնավորում և գրանցամատյանի վարում, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի ժամանակին հայտնաբերում, գրանցում, գնահատում, հաղորդում, բուժում, հսկողություն, հաշվառում և հետազոտություն,					1.0	Փաստաթղթային	
38.8	պատվաստումից հետո անհրաժեշտության դեպքում անհետաձգելի բժշկական օգնության իրականացում,					1.0	Փաստաթղթային	
38.9	անվտանգ պատվաստումների իրականացում,					1.0	Փաստաթղթային	
38.10	սառցային շղթայի պահպանում:					1.0	Փաստաթղթային	
39.	Պատվաստումային գործընթացից առաջ պատվաստում իրականացնողը.	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 71						
39.1	ճշտում է բժշկի կողմից տրված պատվաստման թույլտվության առկայությունը,					2.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	
39.2	համեմատում է պատվաստանյութի սրվակի վրա առկա անվանումը բժշկի նշանակման հետ, ստուգում է տարբերակումը՝ մակնշումը, պատվաստանյութի պահպանման ժամկետը և սրվակի ամբողջականությունը,					2.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	
39.3	դիտողական գնահատում է պատրաստուկի որակը,					2.0	Դիտողական Հարցում	
39.4	միանվագ օգտագործման ինքնարգելափակվող ներարկիչներով կատարում է պատվաստում՝ տվյալ պատվաստանյութի հրահանգին համապատասխան:					2.0	Դիտողական Հարցում	
40.	Պատվաստումային գործընթացից հետո պատվաստում իրականացնողը.	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն						

		հրամանի հավելվածի կետ 72						
40.1	յուրաքանչյուր պատվաստումից հետո տեղադրում է բազմադեղաչափ պատվաստանյութի սրվակը/շիկը սառնարան-պայուսակում,					2.0	Փաստաթղթային Հարցում	
40.2	աշխատանքային օրվա վերջում չօգտագործված փակ սրվակները/շիկները տեղադրում է սառնարանում, իսկ վերականգնված պատվաստանյութի շիկը/սրվակը չօգտագործված դեղաչափով ոչնչացնում է այրման տուփում,					2.0	Փաստաթղթային Հարցում	
40.3	կատարում է գրառումներ կատարված պատվաստումների վերաբերյալ հաշվառման ձևերում և պատվաստումների գրանցամատյանում՝ ըստ կատարված պատվաստումների հերթականության:					1.0	Փաստաթղթային	
41.	ԲԿ-ի տնօրենի հրամանով ձևավորված է կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների սահմանման, պատվաստումներից հրաժարումների քննարկման և խորհրդատվության հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում ներառված է նվազագույնը 3 բժիշկ:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 82, 86				1.0	Փաստաթղթային	
42.	Կանխարգելիչ պատվաստումներից հրաժարման դեպքերի համար առկա է հրաժարվողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից գրված ձեռագիր հրաժարական: Նշում 7 (Ձև 12)	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 83				1.0	Փաստաթղթային	
43.	Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումները և հրաժարումները գրանցվում են «Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների մատյանում»: Նշում 8 (Ձև 17)	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 84				0.5	Փաստաթղթային	

44.	Բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ տվյալները ներառված են ամսական վարչական վիճակագրական հաշվետվությունում:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 96				1.0	Փաստաթղթային	
45.	ԲԻԿՊ-ների կիրառման ընդհանուր պահանջներ՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 97						
45.1	ԲԿ-ի տնօրենի կողմից նշանակված է ԲԻԿՊ-ների վարման պատասխանատու ԲԻԿՊ-ների պահանջարկի որոշման, հաշվառման, պլանավորման, ինչպես նաև սառնարանային սարքավորումների շահագործման և պատվաստանյութերի ստացման, պահպանման ու տեղափոխման, բժշկական թափոնների հավաքման ու ոչնչացման համար,					1.0	Փաստաթղթային	
45.2	ԲԻԿՊ-ների անվտանգ կիրառումն իրականացվում է պատվաստանյութերի արդյունավետ կառավարման գործողությունների ստանդարտ ընթացակարգերի համաձայն,					1.0	Փաստաթղթային Հարցում	
45.3	ապահովված է պատվաստանյութերի և պատվաստումների օժանդակ պարագաների 25% պահուստային քանակություն,					1.0	Փաստաթղթային Դիտողական	
45.4	առկա է հոսանքի այլընտրանքային աղբյուր, վթարային/արտակարգ իրավիճակում պատվաստանյութի տեղափոխման պլան/պայմանագիր,					1.0	Փաստաթղթային Դիտողական	
46.	Կատարվում է ԲԻԿՊ-ների տարեկան, եռամսյակային, ամսական պահանջարկի (ըստ ամիսների) հաշվարկ՝ ըստ ԲԻԿՊ-ների պլանավորման հայտի: Նշում 9 (Ձև 18)	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 98				1.0	Փաստաթղթային	

47.	ԲԻԿՊ-ները վարող պատասխանատուն՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 100						
47.1	մասնակցում է պատվաստանյութերի ամսական, եռամսյակային, տարեկան պահանջարկի պլանավորմանը,					1.0	Փաստաթղթային	
47.2	ստանում, գրանցում և պահեստավորում է ԲԻԿՊ-ները, Նշում 10 (Ձև 19)					0.5	Փաստաթղթային Դիտողական	
47.3	կազմում և ներկայացնում է ամսական հաշվետվություն ԲԻԿՊ-ների ստացման, ծախսի և պահեստում առկա քանակների վերաբերյալ,					0.5	Փաստաթղթային Դիտողական	
47.4	վարում է ԲԻԿՊ-ների և օժանդակ պարագաների խոտանման գրանցամատյանը և կազմում արձանագրություն 2 օրինակից, որը ստորագրվում է հանձնաժողովի անդամների կողմից, կնքվում տնօրենի կողմից և պահվում առանձին թղթապանակում, Նշում 11 (Ձև 21, Ձև 22)					0.5	Փաստաթղթային Դիտողական	
47.5	վարում է ԲԻԿՊ-ների պահպանման սառնարանների, սառնարան-պայուսակների, թերմոկոնտեյներների գույքագրման և շահագործման մատյանը, Նշում 12 (Ձև 23)					0.5	Փաստաթղթային	
47.6	կազմում է տարեկան տեղեկատվություն գույքագրման և շահագործման վերաբերյալ: Նշում 13 (Ձև 24)					0.5	Փաստաթղթային	
48.	Անվտանգ և արդյունավետ պատվաստումների իրականացման համար ԲԻԿՊ-ները վարող պատասխանատու անձը՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն						

		հրամանի հավելվածի կետ 101, 103						
48.1	աշխատանքային օրվա սկզբում և վերջում ստուգում է սառնարանի ջերմաստիճանը ջերմաչափով և էլեկտրոնային գրանցման սարքով, ինչպես նաև զգայորոշիչների վիճակը, և գրանցում «ԲԻԿՊ-ների պահպանման ջերմային ռեժիմի հսկողության գրանցամատյանում», Նշում 14 (Ձև 25)					1.0	Փաստաթղթային Դիտողական	
48.2	բազմադեղաչափ պատվաստանյութերը բացում կամ վերականգնում է առաջին այցելուի հետ՝ սրվակի/շշիկի վրա նշելով բացման/վերականգնման օրը և ժամը:					1.0	Դիտողական	
49.	Սառնարաններում պատվաստանյութերի տեղադրմանը և սառնարանների օգտագործմանը ներկայացվող պահանջներ.	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 104						
49.1	սառնարանները տեղադրված են պատից 10 սմ հեռավորությամբ, ջեռուցման աղբյուրներից հեռու,					0.5	Դիտողական	
49.2	յուրաքանչյուր սառնարանում տեղադրված է 2 ջերմաչափ, ջերմաստիճանը գրառվում է գրանցամատյանում՝ օրը 2 անգամ,					1.0	Փաստաթղթային Դիտողական	
49.3	առկա են ջերմաստիճանի մշտադիտարկման էլեկտրոնային գրանցող սարքեր, որոնց տվյալները պահպանվում են թղթային և էլեկտրոնային տարբերակով, Նշում 15 (Ձև 26)					1.0	Փաստաթղթային Դիտողական	
49.4	ԲԻԿՊ-ների տեղափոխման համար սառնարան-պայուսակները և թերմոկոնտեյներները հազեցված են բավարար քանակությամբ սառցային տարրերով,					1.0	Դիտողական	

49.5	սառնարանում սննդամթերք, այլ դեղորայք, ժամկետանց պատվաստանյութ չի պահվում,					1.0	Դիտողական	
49.6	ԲԻԿՊ-ները սառնարանում տեղադրված են ըստ պիտանելիության ժամկետների, կարճ պիտանելիության ժամկետներով ԲԻԿՊ-ներն օգտագործվում են առաջնահերթ:					0.5	Դիտողական Հարցում	
50.	ԲԻԿՊ-ները չեն օգտագործվում, երբ՝	«Վ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 105						
50.1	առկա են դրանց ֆիզիկական հատկությունների տեսանելի փոփոխություններ (պղտորություն, փաթիլավորում, գույնի փոփոխություն և այլն),					0.5	Դիտողական Հարցում	
50.2	սրվակի/շշիկի ամբողջականությունը խախտված է,					0.5	Դիտողական Հարցում	
50.3	սրվակի/շշիկի վրա առկա է անհասկանալի պիտակավորում կամ այն բացակայում է,					0.5	Դիտողական Հարցում	
50.4	լրացել է պիտանելիության ժամկետը,					0.5	Դիտողական Հարցում	
50.5	պահպանվել կամ տեղափոխվել են ջերմային ռեժիմի խախտումով (զգայորոշիչի ցուցիչով կամ առանց զգայորոշիչի):					0.5	Դիտողական Հարցում	
51.	Պատվաստանյութերի մնացորդների, օգտագործված ներարկիչների, ասեղների ոչնչացումն իրականացվում է.	«Վ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 106						
51.1	շշիկներում/սրվակներում պատվաստանյութերի մնացորդները, միանվագ օգտագործման (ինքնարգելափակվող) ներարկիչները, ասեղները,					0.5	Դիտողական Հարցում	

	ինչպես նաև խոտանված պատվաստանյութերը հավաքվում են անվտանգ այրման տուփերում մինչև 3/4-ի չափով և ոչնչացվում,							
51.2	յուրաքանչյուր այրման տուփ հանձնելիս կատարվում է գրանցում «Անվտանգ այրման տուփերի ոչնչացման գրանցամատյանում»: Նշում 16 (Ձև 27)					0.5	Փաստաթղթային	

52.	Լուրջ ՀԱԴ-երը գրանցվում են բժշկի կողմից՝ Նշում 17 (Ձև 32)	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 117, 118, 122						
52.1	«Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի գրանցամատյանում»,					1.0	Փաստաթղթային	
52.2	«Կանխարգելիչ պատվաստումների քարտում»,					1.0	Փաստաթղթային	
52.3	«Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում»,					1.0	Փաստաթղթային	
52.4	«Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց պլանավորման մատյանում»:					1.0	Փաստաթղթային	
53.	Թեթև ՀԱԴ-երը գրանցվում են բուժքրոջ կողմից՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 117, 118, 121						
53.1	«Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում»,					1.0	Փաստաթղթային	
53.2	«Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում»,					1.0	Փաստաթղթային	

53.3	«Նորածնի զարգացման պատմությունում»,					1.0	Փաստաթղթային	
53.4	«Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում»:					1.0	Փաստաթղթային	
54.	Հետպատվաստումային շրջանում բուժաշխատողի կողմից կատարվում են՝	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 119						
54.1	դիտարկումներ՝ բոլոր պատվաստանյութերի ներմուծումից հետո 0-48 ժամվա ընթացքում, կարմրուկ, կարմրախտի բաղադրիչ պարունակող պատվաստանյութերի դեպքում նաև՝ 6-12-րդ օրերի, ռոտավիրուսային պատվաստանյութի դեպքում՝ նաև 4-7-րդ օրերի, տուլարեմիայի դեմ պատվաստման դեպքում՝ 4-15-րդ օրերի ընթացքում,					2.0	Փաստաթղթային Հարցում	
54.2	գրանցումներ պատվաստումներից հետո դիտարկման արդյունքների մասին,					2.0	Փաստաթղթային	
54.3	ՀԱԴ-ի բացակայությունը գրանցվում է բոլոր պատվաստումներից 48 ժամ հետո (պատվաստման օրից հաշված 3-րդ օրը) ամբուլատոր քարտում: ԿԿԻ պատվաստման դեպքում գրանցումը կատարվում է նաև պատվաստման օրից հաշված 12-րդ օրը, ռոտավիրուսային պատվաստման դեպքում՝ նաև 7-րդ օրը, տուլարեմիայի դեպքում՝ նաև 15-րդ օրը,					2.0	Փաստաթղթային	
54.4	ՀԱԴ-ի առկայությունը (թեթև և լուրջ) գրանցվում է ՀԱԴ-ի առաջացման օրը՝ ամբուլատոր քարտում և պատվաստումների պլանավորման գրանցամատյանի նկատառումներ սյունակում:					2.0	Փաստաթղթային	
55.	ՀԱԴ-երի վերաբերյալ ներկայացվում է ամսական վարչական վիճակագրական հաշվետվություն:	ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի կետ 125				1.0	Փաստաթղթային	

56.	<p>Լուրջ ՀԱԴ-երի կասկածելի դեպքերի մասին անմիջապես տեղեկացվել է ԲԿ-ի տնօրենը, տեղեկացվել է Լիազոր մարմինը և 24 ժամվա ընթացքում ուղարկվել է շտապ հաղորդում: Նշում 18 (Ձև 33)</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելված, կետ 123, 126, 127, 128</p>				1.0	<p>Փաստաթղթային Հարցում</p>	
-----	--	---	--	--	--	-----	-----------------------------	--

Ծանոթություններ*

Նշում 1

Ձև 1

0-18 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ «ՄԱՅՐ ՄԱՏՅԱՆ»

Հ/Հ	Անուն, հայրանուն, ազգանուն	Ծննդյան օր, ամիս, տարի	Բնակության վայր	Հաշվառման վերցնելու օր, ամիս, տարի	Հաշվառումից հանելու օր, ամիս, տարի	Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտ	Կանխարգելիչ պատվաստումների քարտ (063)	Դիտողություններ
-----	----------------------------	------------------------	-----------------	------------------------------------	------------------------------------	--	---------------------------------------	-----------------

Ձև 2

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Անուն, հայրանուն, ազգանուն	Ծննդյան օր, ամիս, տարի	Բնակության վայր	Հաշվառման վերցնելու օր, ամիս, տարի	Հաշվառումից հանելու օր, ամիս, տարի	Մեծահասակի ամբուլատոր քարտի առկայություն	Դիտողություններ	Կոնտակտային տվյալներ՝ հեռախոսահամար
-----	----------------------------	------------------------	-----------------	------------------------------------	------------------------------------	--	-----------------	-------------------------------------
